



## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՎ... ԵՎ ԵՂԱՎ ՀՈՒՅՍ

Քրիստոնեական երկհազարամյակի վերջին տասնամյակն է: Գրեթե երկու հազար տարի է, որ Բեթղեհեմի աստղը լուսավորում է մարդկության ճանապարհը դեպի արդարություն և դեպի Աստված:

«Անբաւելին երկնի և երկրի, ի խանձարուս պատեցաւ»: Ահա խորին խորհուրդը Քրիստոսի ծննդյան: Նա, որ անպարփակելի էր երկնքում և երկրում՝ Աստվածորդին, խոնարհվեց՝ լույսով լցնելու մսուրը իբրև տիեզերքի խորհրդանիշ:

Հիսուս եկավ «վասն փրկութեան ազգի մարդկան»: Քրիստոս եկավ «ի լրումն ժամանակի», երբ մարդ արարածը տվայտում էր մեղքի ծովում: Եվ Աստվածորդին հաստատեց. «Չիք խտիր, ոչ հրեի, ոչ հեթանոսի»: Մեղավոր էին բոլորը, ու փրկության կարիք ուներ ամեն մարդ: Եվ Քրիստոս աշխարհ եկավ իբրև մարդ՝ ցոյց տալու համար, թե ինչպես կարելի է ապրել իբրև մարդ և արժանանալ Աստուծո տեսության: Նա եկավ իր սեփական օրինակով մատնանշելու փրկության ուղին:

### ՀՈՒՅՍԸ

Աստված ստեղծեց մարդուն, որպես կատարելագույնը արարածներից: Եվ մարդու կատարելության երաշխիքը Աստծու պարգևած ազատությունն էր. ընտրելու ազատությունը, ապրելու ազատությունը, մեռնելու ազատությունը: Եվ սակայն մարդը տկարացավ, կորցրեց ինքնատիրապետությունը աշխարհի շոայլ բարիքների նկատմամբ, որ պարգևնել էր Աստված: Տկարացավ, մեղանչեց և սայշաքեց: Եվ սերունդ առ սերունդ՝ առավել ևս: Նահանջեց ազատությունը, և մարդ արարածը գերի դարձավ ինքն իր շուրջ հյուսած մեղքի: Եվ մեղքի սարդը հյուսում էր կորսույան սարդոստայնը: Ու Աստծու պատկերով ստեղծված մարդու գիտակցության մեջ մթագնեց հույսը ազատության: Եվ եկավ Որդին Աստուծո՝ նորոգելու հույսը, դառնալու այդ Հույսը: Ինքը Աստուծո ազատ կամքն էր և քերեց մարդուն կամքի ազատության հույսը: Այդ հույսը դարձավ հավատամք՝ Քրիստոսի միջոցով փրկության: Տերը մեր ապավենան է, այբը և քեն մեր բոլոր կարողութանց և հաջողությունների: «Յոյս ոչ ամաչեցուցանէ»:

### ՀԱՎԱՏՔԸ

Աստվածորդին մարմնացավ, ծնավ կատարելապես և քերեց իր ճշշմարտությունը: Քարոզեց ամենուր, հրաշքներ գործեց ու առակներ պատմեց և հաստատեց վարդապետություն: «Ոչ եկի լուծանել, այլ լնուլ», ասում

Է Քրիստոս: Եվ իսկապես չեկավ ժխտելու, այլ եկավ հաստատելու այն բարին ու գեղեցիկը, որ Աստված պարզեց էր մարդուն: Եկավ մարդու ստեղծագործական միտքը դեպի բարին ու արդարը մղելու: Եվ այդ վարդապետությունը դարձավ հավատք Աստվածորդու առաքելության նկատմամբ: Քրիստոսի նկատմամբ հավատքը դարձավ լուսի աղբյուր, վահան՝ վտանգի դեմ, և արմատ՝ արդարության ծլարձակման: Եվ գոյատնեց ու ամրացավ մեր ազգը այդ հավատքով, ձևավորվեց ու ամբողջացավ նրա ազգային կերպարը իբրև քրիստոնյա, այսինքն՝ դեպի լուսը կողմնորոշված ժողովուրդ: Այդ հավատքը եղավ կյանքի սկզբունք և գոյատնման խարիսխ: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը պիտի հաստատեր. «Ապրելու և գոյատնելու մեր ազգային ուխտը նվիրագործվել ու պայծառակերպվել է առաքելական մեր Մայր Եկեղեցու աղոթքներով և լուս ճառագայթումներով սերնդից սերունդ, անմար հավատով առ Աստված ու տեսիլքովը հավիտենականության խորհրդի:

Այո, հայը հավատում է Աստծուն, որովհետև որոշել է չմահանալ, այլ ապրել ամեն գնով, ապրել ու արարել բոլոր պայմաններում»:

## ՍԵՐԸ

Աստված սեր է: Եվ Աստված այնքան սիրեց մարդուն, որ իր Միածին Որդուն ուղարկեց նրա փրկության համար. «Աստուած Հայր մեր, որ սիրեացն զմեզ» (Բ. Թեսաղ. Բ. 15): «Ես և Հայր իմ մի եմք», ասաց Քրիստոս, և կրկնեց «որպէս դո՛ւ, Հայր, յիս, և ես ի քեզ» (Հովհ. ԺԷ 21): Ուրեմն Քրիստոս սեր է, և իր սերը բաշխեց մարդկության իր երկրավոր կյանքով: Սիրեց իր աշակերտներին և բոլորին, ով լսեց նրա խոսքը: Եվ Քրիստոսի նկատմամբ սիրով էլ շաղախվեց առաջին քրիստոնեական համայնքը ամենուր, նաև ի Հայաստան աշխարհի: Ու դարերի ընթացքում Քրիստոսի սերը դարձավ հայ մարդու ապրելակերպը՝ բարեսրտության և այլասիրության ամենանվեր կենցաղով: Քրիստոնեությունը դարձավ համամարդկային սիրո վկայությամբ լեցուն մշակույթ՝ ճարտարապետություն ու երաժշտություն, մանրանկարչություն ու գրականություն:

Եվ այսօր, առավել քան երբեւ, մեր ազգին պետք է այս եռամիասնությունը՝ Հուս, Հավատք և Սեր: Առանց Հավատքի անվճռական կլիսեն մեր բոլոր քայլերը դեպի ապագա, առանց Սիրո դժվար կլիսի միասին մագլցել հոչակված անկախության անհնարին բարձունքները, իսկ թե չլինի միասին բարձրանալը, հաստատապես անկարելի կլիսի նվաճումը բարձունքի: Եվ առանց Հուսի չկա լավատեսություն, չկա լուսի առավոտ, այլ կլիսի ընկրկում ու նաև նահանջ ձեռք բերվածից: Պիտի հավատանք մեր անցյալին, մեր նախնիների անցած ուղուն և վաղվա ճանապարհի արդարության: Պիտի սիրենք իրար քրիստոնեաբար ու անսակարկ, համազգային սերն է հաջողության գրավականը: Իսկ հուսը կյանքի լույսն է, և այդ լույսը այս նոր տարում նորից Հայաստան աշխարհում ծագեց Քրիստոսի Ծնունդով: Լսենք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի պատգամը.

«Աստուծոյ Որդին է, որ իր հրաշալի ծննդեան մեծ խորհուրդով հրաւիր է կարդում մեզ բոլորին, համայն մեր քրիստոնեայ ժողովուրդին՝ անելեր մնալ նախնեաց սուրբ հաւատքի վէմին վրայ, հաւատարիս մեր ազգի

առաքելական Մայր Եկեղեցուն, ու անմնացորդ կերպով, բանի և գործով ծառայել մեր նորահոչակ ինքնիշխան հայրենի պետութեան, որպէսզի նա քայլ առ քայլ յաղթահարի իր առաջ ծառացած դժուարութիւնները, պահի պահպանի ու ամրապնդի իր ձեռք բերած ազատութիւնները... յառաջ ընթանայ առանց յուսալքուելու.. մանաւանդ առանց թուլացնելու իր ազգային միասնութիւնը, զի անմիաբանութիւնը չարեաց մայրն է, իսկ միաբանութիւնը՝ մայր բարեաց»:

**Ուրեմն Սեր, Հավատք և Հույս բոլորին:**

**«Քրիստոս Ծնաւ և յայտնեցաւ: Օրհնեալ է Ծնունդն Քրիստոսի»:**

